# ՀԴՄ
# ՈՒՂԵՑՈՒՅՑ

FASTBANK

# ԿԱՐԵՎՈՐ

Գործարքը համարվում է հաստատված միայն «000» պատասխան կոդի և հավաստագրման կոդի առկայության դեպքում

Հաստատված գործարքների կտրոնները պետք է պահպանել առնվազն 1 տարի

Մերժված գործարքների կտրոնները տրամադրվում են հաճախորդին և համարվում են չհաստատված անկախ հանգամանքներից



FASTBANK

# ՔԱՐՏԱՏԵՍԱԿՆԵՐ

- Անհպում քարտատեսակներ (NFC կամ Contactless)
- Չիպային քարտատեսակներ
- Ժապավենային քարտատեսակներ



FASTBANK

## ԱՆՀՊՈՒՄ ՔԱՐՏԱՏԵՍԱԿՆԵՐ (NFC ԿԱՄ Contactless)

Այս տեսակի քարտերն ունեն չիպ և անհպում նշան **(Contactless-**ի նմանվող նշանը**)**
Քարտն առձեռն չի փոխանցվում**,** հաճախորդը քարտը պահում է **POS-HDM** սարքի առանձնացված հատվածին կամ էկրանին **(**կախված սարքի ձևից**)**
Մինչև **20 000 (**քսան հազար**)** ՀՀ դրամ գումարի վճարումներն անցնում են առանց **PIN** կոդի հարցման

## ՉԻՊԱՅԻՆ ՔԱՐՏԱՏԵՍԱԿՆԵՐ

Այս քարտերն ունեն միայն չիպ
Քարտը փոխանցվում է գործարք իրականացնող մասնագետին, տեղադրվում է տերմինալի չիպն ընթերցող հատվածում, ապա հաճախորդը մուտքագրում է PIN կոդը

## ԺԱՊԱՎԵՆԱՅԻՆ ՔԱՐՏԱՏԵՍԱԿՆԵՐ

Այս տեսակի քարտերը չունեն չիպ կամ անհպում նշան (Contactless նշանը)
Գործարկվում են հետևի մասում գտնվող մագնիսական ժապավենով
ՀԴՄ սարքերն այս քարտերի դեպքում մշտապես հարցնում են քարտի վերջին 4 թվերը, որոնք մուտքագրում է գործարքն իրականացնող մասնագետը:
Գործողությունը կատարելուց հետո հաճախորդն անձամբ մուտքագրում է իր քարտի PIN կոդը

# ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Մուտքագրեք գանձվող գումարը
- Սեղմեք «ԱՆԿԱՆԽԻԿ»-ի կոճակը
- Ընտրեք Տպել/Վճարել տարբերակը



FASTBANK

# ՔԱՐՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ՝ ԿԱԽՎԱԾ ՏԵՍԱԿԻՑ

Անհպում (NFC կամ Contactless) քարտերի դեպքում Հաճախորդն ինքնուրույն մոտեցնում է քարտը սարքի համապատասխան հատվածին, իսկ 20 000 (քսան հազար)

ՀՀ դրամը գերազանցող գումարի դեպքում Հաճախորդը պետք է հավաքի PIN կոդը:

Չիպային քարտերի դեպքում Քարտը տեղադրվում է սարքի մեջ՝ չիպը կարդացող հատվածում, որից հետո հաճախորդը մուտքագրում է PIN կոդը:

Ժապավենային քարտատեսակերի դեպքում քարտը սահեցվում է հատուկ նախատեսված վայրով՝ ժապավենն ուղղված ներքև և դեպի ՀԴՄ սարքը:

Գանձապահը մուտքագրում է վերջին 4 նիշը, ապա հաճախորդը մուտքագրում է իր քարտի PIN կոդը:

Տպվում է  կտրոն։

Մերժված գործարքի դեպքում տպվում է 1 օրինակ, որը տրամադրվում է հաճախորդին։

Հաստատված գործարքի դեպքում տպվում է 2 օրինակ, ընդ որում՝ առաջին օրինակը գանձապահինն է,
որը կտրելուց հետո նոր անհրաժեշտ է ընտրել տարբերակներից մեկը (Տպել հաճախորդին օրինակ՝ այո կամ ոչ):

Անկախ Ձեր ընտրած տարբերակից,  ՀԴՄ կտրոնն անպայման տպելու է:

# ԿԱՐԵՎՈՐ Է ՀԻՇԵԼ

Հաճախորդի PIN կոդը չպետք է հասանելի լինի Ձեզ

Գործարքի մեկնարկից առաջ ցանկալի է ճշտել՝ արդյոք քարտն աջակցում է անհպում վճարմանը

Հաստատված կտրոնները պարտադիր պետք է պահպանել նվազագույնը 1 տարի

Եթե կտրոնը դուրս է եկել որպես Մերժված, ապա գործարքը համարվում է չհաստատված և չհաշվառվող, նույնիսկ եթե հաճախորդը պնդում է հակառակը

# ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ–ՊԱՏԱՍԽԱՆ ԿՈԴԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ

Authorization response codes

| Կոդ | Մեկնաբանություն հայերեն | Մեկնաբանություն անգլերեն |
|---|---|---|
| 000 | Հաստատում | Approved |
| 104 | Գործարքը մերժված է, բլոկված քարտ | PIN-TRIES EXCEED |
| 103 | Գործարքը մերժված է, դիմեք թողարկող բանկին | CALL ISSUER |
| 119 | Սխալ գործարք, համակարգի անվտանգության խախտում | SECURITY VIOLATION |
| 903 | Գործարքը մերժված է, կրկնել գործարքը | RE-ENTER TRANS |
| 204 | Առգրավել քարտը | PICK-UP CARD |
| 101 | Գործարքը մերժված է, ժամկետանց քարտ | EXPIRED CARD |
| 106 | Գործարքը մերժված է, գերազանցվել է PIN կոդի մուտքագրման թույլատրված քանակը | PIN-TRIES EXCEED |
| 206 | Գործարքը մերժված է, գերազանցվել է PIN կոդի մուտքագրման թույլատրված քանակը | PIN-TRIES EXCEED |
| 208 | առգրավել քարտը | PICK-UP CARD |
| 209 | առգրավել քարտը | PICK-UP CARD |
| 203 | առգրավել քարտը | PICK-UP CARD |
| 202 | Գործարքը մերժված է, նման համարով քարտ գոյություն չունի | INVALID CARD |
| 920 | Գործարքը մերժված է, բանալիների խնդիր | INVALID CARD |
| 117 | Գործարքը մերժված է, սխալ PIN | INCORRECT PIN |

# ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ–ՊԱՏԱՍԽԱՆ ԿՈԴԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ

Authorization response codes

| | | |
|---|---|---|
| 125 | Գործարքը մերժված է, նման համարով քարտ գոյություն չունի | INVALID CARD |
| 111 | Գործարքը մերժված է, նման համարով քարտ գոյություն չունի | INVALID CARD |
| Z3 | Գործարքը մերժված է, կապի բացակայություն | - |
| 200 | Գործարքը մերժված է, նման համարով քարտ գոյություն չունի | INVALID CARD |
| 902 | Գործարքը մերժված է, կրկնել գործարքը | RE-ENTER TRANS |
| 116 | Գործարքը մերժված է, անբավարար միջոցներ | INSUFFICIENT FUNDS |
| 111 | Գործարքը մերժված է, քարտի մասին ինֆորմացիան բացակայում է | NO CARD RECORD |
| 109 | Գործարքը մերժված է, սպասարկման կետի նույնականացման համարը սխալ է | INVALID MERCHANT |